ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ
ՁԵՐԲԱԿԱԼՎԱԾ ԱՆՁԱՆՑ ՊԱՀԵԼՈՒ ՎԱՅՐԵՐՈՒՄ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ
ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԴԻՏՈՐԴԱԿԱՆ ԽՈՒՄԲ

№ 2621/1462

24.09.2014թվ.

ՀՀ Ոստիկանության պետ,
գեներալ-լեյտենանտ
պարոն՝ Վ. Գասպարյանին

Հարգելի պարոն Գասպարյան,

Դիտորդական խումբը սույն թվականի սեպտեմբեր ամսին այցելելով ՀՀ ոստիկանության Արագածոտնի ՄՎ Ապարանի ՁՊՎ հայտնաբերել էր մի շարք թերություններ:

Ինչպես նախորդ այցելության ընթացքում, այնպես էլ տվյալ այցելության ժամանակ Դիտորդական խումբը արձանագրեց, որ ինչպես խցերում, այնպես էլ սանհանգույցում բացակայում էր հիգիենիկ թուղթը, չէր գործում զուգարանակոնքի ջրահեռացման համակարգը, ճաշասենյակում բացակայում էր աման լվանալու հեղուկը, սառնարանը և սննդի տաքացման տաքացուցիչը:

Տվյալ տարածքի ջրամատակարարման և համապատասխան բաքի և մղիչ պոմպի բացակայության պատճառով ՁՊՎ –ն ունենում է ջրամատակարարման խնդիր:

ՀՀ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՇՏԱԲ
մուտք № 3751
«26» 09 2014 թ.

Հարգանքներով՝

ՀՀ Ոստիկանության Քարտուղարություն
Մուտք Թիվ 7510
«25» 09 2014թ.

ՀՀ ոստիկանության համակարգի ձերբակալված անձանց պահելու վայրերում վերահսկողություն իրականացնող հասարակական Դիտորդական խմբի նախագահ՝

Հ. Սահակյան

ՀՀ ք.Երևան 0002,Դեմիրճյան 29-1ա
www.policemonitoring.org
Հեռ./ֆաքս: (+374 10) 56 87 42
E-mail: info@policemonitoring.org

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՇՏԱԲ

375025, ք. Երևան, Նալբանդյան 130 հեռ. 59-65-94

N 2/2-1-2523 << 09 >> 10 2014թ.

Ձեր 24.09.2014թ. թիվ 2621/1462 գր.

ՀՀ ոստիկանության համակարգի ձերբակալվածներին պահելու վայրերում հասարակական դիտորդների խմբի նախագահ Հասմիկ Սահակյանին

Հարգելի տիկին Սահակյան

Հայտնվում է, որ դիտորդների խմբի կողմից ս/թ սեպտեմբեր ամսին ՀՀ ոստիկանության Արագածոտնի մարզային վարչության Ապարանի բաժնի ձերբակալվածներին պահելու վայր կատարած այցելության ընթացքում արձանագրված թերություններն ուսումնասիրվել են ՀՀ ոստիկանության շտաբում և Արագածոտնի մարզային վարչությունում, որի կապակցությամբ տրվում են հետևյալ մեկնաբանությունները.

1. Ոստիկանության Արագածոտնի մարզային վարչությունից ստացված գրության համաձայն՝ ոստիկանության Ապարանի բաժնի հերթապահ մասի ՁՊՎ-ի խցերը և սանհանգույցն ներկայումս ապահովվել են հիգիենիկ թղթերով, իսկ ճաշասենյակը՝ սննդի տաքացման տաքացուցիչով և աման լվանալու հեղուկով:

2. ՀՀ կառավարության 05.06.2008թ. թիվ 574-Ն որոշմամբ հաստատված <<ՀՀ ոստիկանության համակարգում գործող ձերբակալվածներին պահելու վայրերի ներքին կանոնակարգ>>-ի որևէ կետով նախատեսված չէ ճաշասենյակում սառնարանի առկայությունը:

3. Արագածոտնի մարզի Ապարան քաղաքի ջրամատակարարումը շուրջօրյա չէ և ջրի ճնշման թուլանալու պատճառով ՁՊՎ-ի սանհանգույցի զուգարանակոնքի ջրահեռացման համակարգը գործում է ոչ լիարժեք: Ներկայումս աշխատանքներ են տարվում լոգարանում համապատասխան բաք ու մղիչ պոմպ տեղադրելու ուղղությամբ, ինչի վերաբերյալ դիտորդների խմբին կհայտնվի լրացուցիչ:

ՀՀ ոստիկանության շտաբ